



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

21.06.2023թ.

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԲՈՒԺԱՇԽԱՑՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հունիսի 21-ը Հայաստանում նշվում է որպես Բուժաշխատողի մասնագիտական տոն, ինչի կապակցությամբ շնորհավորում եմ հատկապես Կոտայքի մարզի բոլոր բուժաշխատողներին՝ բժիշկներին, բուժքույրերին, բուժակներին, մայրապետերին և, առհասարակ, առողջապահության ոլորտի բոլոր աշխատակիցներին:

Սիրելի՝ բուժաշխատողներ,  
ձեր աշխատանքը, թերևս, ամենաբարդ, պատասխանատու, նվիրական և աստվածահաճ աշխատանքներից է:

Այն առաքելություն է՝ ուղղված մարդկային կյանքերի փրկությանը և մարդկանց առողջության պահպանմանը:

Ձեր աշխատանքը ժամ ու ժամանակ չի ճանաչում. շատ հաճախ այն կատարում եք ձեր կյանքի, առողջության և հանգստի հաշվին:

Հավատացած եղեք, որ քաջ գիտակցում ենք այն դժվարությունները, որոնց առնչվում եք ամեն օր, քայլ ամենով հանդերձ, պիտի խնդրեմ, որ շարունակեք նոյն եռանդով, աշխատասիրությամբ և որ ամենակարևորն է, մարդասիրությամբ վերաբերել ձեր առաքելությանը, բուժաշխատողի ձեր բարձր կոչմանը:

Վստահեցնում եմ, որ կառավարությունն ամեն ինչ անում է, որպեսզի ատողապահության ոլորտին ուղղված բարեփոխումները ևս լինեն շարունակական, և մեր բուժաշխատողներն ունենան անհրաժեշտ աշխատանքային պայմաններ և միջավայր:

Շնորհակալ ենք Հիպոկրատի երդմանը հավատարիմ բոլոր բուժաշխատողներին:

Առանձնահատուկ շնորհավորում եմ նաև ուսումնական բժիշկներին և սահմանամերձ բնակավայրերի մեր բուժաշխատողներին, մաղթում առողջություն, բարօրություն և ամենայն բարիք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՀԱՐՈՆ ՄԱՀԱԿՅԱՆ